

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, Բ.Գ.Պ.

\_\_\_\_\_ Խաչատրյան Գ.Կ.

“ \_15\_ ” \_\_03\_\_\_\_\_ 2013թ.

ԿԱՐԳ  
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ

Ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագրություն թիվ 6 “ \_08\_ ” \_\_07\_\_\_\_\_ 2010թ.)

Փոփոխվել է՝

(արձանագրություն թիվ 2 “ \_07\_ ” \_\_03\_\_2013թ.)

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի կարգը (այսուհետ՝ Կարգ) մշակված է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) Կանոնադրության և «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգ»-ի հիման վրա:

1.2. Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքը (այսուհետ՝ ինքնուրույն աշխատանք) ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է արտալսարանային ժամանակի հաշվին՝ դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

1.3. Սույն Կարգով սահմանվում է ապագա մասնագետների ընդհանուր և մասնագիտական կարողությունների ձևավորման գործոնի՝ ինքնուրույն ուսումնական և գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ պահանջները և պայմանները:

1.4. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ծավալը որոշվում է պետական կրթական չափորոշիչի հիման վրա մշակված և Ինստիտուտի գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերվող համապատասխան կարգերով:

1.5. Ինքնուրույն աշխատանքը պարտադիր է յուրաքանչյուր ուսանողի համար և որոշվում է տվյալ մասնագիտության ուսումնական պլանով:

1.6. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ժամաքանակի ծավալը ներառվում է ընդհանուր ժամաքանակի մեջ և հաշվարկվում է՝ համաձայն Ինստիտուտի «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»-ի:

1.7. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ձևերը որոշվում են՝ պայմանավորված դասավանդվող առարկայի բովանդակությամբ, և կարող են լինել ուսումնական կամ ուսումնահետազոտական բնույթի:

1.8. Ինքնուրույն աշխատանքների ձևերը, ծավալները և բովանդակությունը որոշում են ամբիոնները՝ համաձայն ուսումնական պլանների և ծրագրերի, ինչն ամրագրվում է առարկայի ուսումնամեթոդական փաթեթում՝ ինքնուրույն աշխատանքներին նվիրված մեթոդական նյութերում:

## **2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի նպատակները և խնդիրները**

2.1. Ինքնուրույն աշխատանքի նպատակներն են.

ա) կրթության բնագավառում արհեստավարժության սկզբունքի իրականացումը:

բ) ուսանողի մոտ.

- ինքնակրթության պահանջմունքի դաստիարակումը,
- իմացական և ստեղծագործական կարողությունների զարգացումը,
- մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորումը,
- գիտահետազոտական աշխատանք կատարելու պահանջմունքի ձևավորումը:

2.2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի խնդիրներն են.

ա) Նպաստել վերլուծողական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, այն է՝

- սովորել ինքնուրույն ձևակերպել ինքնուսուցման նպատակը և պլանավորել դրան հասնելուն ուղղված անհրաժեշտ քայլերը,
- տարբերակել ինքնուրույն ուսումնասիրության (հետազոտության) համար ընտրված ուսումնական նյութերը՝ ըստ նրանց կարևորության,
- կարողանալ տարբերակել գլխավորը և երկրորդականը ինքնուրույն աշխատանքի տարբեր ձևերում:

բ) Նպաստել ուսանողների տեղեկատվական-տեխնոլոգիական կարողությունների և հմտությունների ձևավորմանը, այն է՝

- պլանավորել և կազմել ինքնուրույն աշխատանքի ծրագիրը,
- սեղմագրել ուսումնական գրականությունը, դասախոսական տեքստերը,
- ինքնուրույն նախապատրաստել և ներկայացնել զեկուցում, ելույթներ սեմինարներին և գործնական պարապմունքներին, ընտրել ուսումնական ծրագրի առարկայի յուրացման համար անհրաժեշտ գրականություն, գրել ստուգողականներ, ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ և այլն,
- գրել գիտական հոդված, կատարել ստեղծագործական առաջադրանքներ,

- ինքնուրույն աշխատել տեղեկատվական, ուսումնական գրականության և նորմատիվային փաստաթղթերի հետ:
- գ) Նպաստել ուսանողի ադապտացիոն (հարմարվողական) ունակությունների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, այն է՝
  - ինքնակարգապահության և մասնագիտական մղումների որոշակի մակարդակի ձևավորում՝ որակյալ մասնագիտական պատրաստվածության ապահովման համար,
  - ինքնակատարելագործման և ինքնակայացման պահանջմունքի ձևավորում,
  - ձեռքբերած գիտելիքների և կարողությունների կիրառման ունակություն ուսումնական և գործնական գործունեության ոլորտներում:

### **3. Ինքնուրույն աշխատանքի ձևերը**

Ինստիտուտում ուսանողի ինքնուրույն աշխատանքի ձևերն են.

- ուսումնական առարկաների ծրագրով նախատեսած գրականություն ուսումնասիրությունը և սեղմագրումը,
- նախապատրաստումը սեմինարներին, գործնական և անհատական պարապմունքներին, ելույթների սեղմագրերի և պլանների կազմումը,
- ուսումնական ծրագրերում ընդգրկված, բայց ուսումնական գրականության մեջ անբավարար լուսաբանված հարցերի ուսումնասիրումը,
- ռեֆերատ, կուրսային աշխատանք, ավարտական որակավորման աշխատանք կատարելու համար նյութերի ընտրությունը,
- ուսանողական գիտական ընկերության շրջանակներում կատարվող գիտահետազոտական աշխատանքը, զեկուցումները, տեղեկատվական հաղորդումները, հատուկ և գիտական պարբերական հրապարակումների վերլուծությունը,
- օտար լեզուներից թարգմանությունների կատարումը,
- **պրակտիկայի հաշվետվության կազմումը, և այլն:**

### **4. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի պլանավորումը**

4.1. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը պլանավորվում է յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված բոլոր տեսակի պարապմունքներին տրամադրվող հաշվարկված ժամանակի հիման վրա՝ համաձայն ուսումնական պլանի:

4.2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ծավալը և բաշխումը ըստ առանձին տեսակների (անհատական պարապմունքներ, ուսանողի կողմից կատարվող

ինքնուրույն աշխատանք) պետք է արտահայտվեն առարկայական օրացուցային-թեմատիկ պլաններում:

4.3. Ուսանողի ինքնուրույն աշխատանքին հատկացված ժամանակը որոշվում է՝ հաշվի առնելով 45-ժամյա ուսումնական շաբաթը:

4.4. Գործող օրացուցային-թեմատիկ պլանների հիման վրա դեկանատները և ուսումնական բաժինը կազմում են դասախոսի դեկավարությամբ իրականացվող ուսանողների ինքնուրույն աշխատանքի (անհատական պարապմունքների) դասացուցակ:

4.5. Ամբիոնի և դասախոսի կողմից ինքնուրույն աշխատանքի պլանավորումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները

- ուսումնական գործընթացում դասավանդման որակը բարձրացնող ուսուցողական նոր տեխնոլոգիաների ներդրում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ ուսանողի համար նյութի յուրացումը ավելի դյուրին դարձնելու և իրեն ավելի հարմար պահին օգտագործելու նպատակով,
- համակարգչային թեստավորման կիրառում,
- սեմինար և գործնական պարապմունքների, ուսանողների գիտահետազոտական աշխատանքի, արտադրական պրակտիկայի անցկացման մեթոդիկայի կատարելագործում,
- կուրսային և դիպլոմային աշխատանքների պլանավորման և կատարման համակարգերի կատարելագործում՝ այդ աշխատանքներում ուսանողի դերը բարձրացնելու նպատակով:

4.6. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովմանը և բարելավմանն ուղղված աշխատանքները պետք է արտահայտվեն դասախոսների անհատական պլաններում:

## **5. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի կառուցվածքը**

Ուսանողի ինքնուրույն աշխատանքը բաղկացած է 2 մասից՝

- դասախոսի վերահսկողությամբ ուսանողի կողմից կատարվող աշխատանք,
- առանց դասախոսի վերահսկողության ուսանողի կողմից կատարվող աշխատանք:

5.1. Դասախոսի կողմից և նրա վերահսկողությամբ իրականացվող ինքնուրույն աշխատանքը նպատակ ունի խորացնելու և ամրագրելու ստացած գիտելիքները,

գարգացնելու տվյալ առարկայի բնագավառում վերլուծական և գործնական կարողություններն ու հմտությունները: Այդ ինքնուրույն աշխատանքը կատարվում է անհատական պարապմունքների ձևով, որոնց ընթացքում դասախոսը, մի կողմից՝ անցկացնում է խորհրդակցություն ուսանողների հետ, մյուս կողմից, իրականացնում է վերահսկողություն և գնահատում է ուսանողի անհատական առաջադրանքների և ինքնուրույն աշխատանքի կատարման արդյունքները:

5.2. Ինքնուրույն աշխատանքի արդյունքները գնահատվում են՝ համաձայն Ինստիտուտում գործող գիտելիքների գնահատման բալային-ռեյթինգային համակարգի չափանիշների:

5.3. Ուսանողի կողմից անցկացվող ինքնուրույն աշխատանքն օգնում է նրան պատրաստվելու ընթացիկ լսարանային պարապմունքներին (դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներ), աջակցում է առարկայի խորացված ուսուցմանը: Այդ աշխատանքի արդյունքները արտահայտվում են լսարանային պարապմունքների ընթացքում ուսանողի ակտիվությամբ, կատարած զեկուցումների, թեստային առաջադրանքների, ստուգողական աշխատանքների մակարդակով:

Ինքնուրույն աշխատանքի արդյունքները հաշվի են առնվում ուսանողի ընթացիկ առաջադիմության և ռեյթինգային գնահատականի ձևավորման համար:

## **6. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպչական-մեթոդական ապահովումը**

6.1. Ուսանողների կողմից ինքնուրույն աշխատանքների կատարման, ըստ դասավանդվող առարկաների առանձնահատկությունների ձևերի և մեթոդների ընտրության պատասխանատվությունը կրում են ամբիոնները: Ուսանողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար պետք է հստակ ձևակերպել ուսումնական աշխատանքի նպատակներն ու խնդիրները, ինքնուրույն աշխատանքի ակնկալվող արդյունքները, ձեռքբերած գիտելիքների, հմտությունների, մասնագիտական կարողությունների ստուգման ձևերը:

6.2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքը պետք է ապահովված լինի.

- անհրաժեշտ տեղեկատվական ռեսուրսներով (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, անհատական առաջադրանքների փաթեթներ, տեղեկատուներ, ուսուցանող ծրագրեր, կիրառական ծրագրային փաթեթներ և այլն),
- մեթոդական նյութերով (ցուցումներ, պրակտիկումներ և այլն ),

- ստուգող նյութերով (թեստեր, հարցաշարեր և այլն),
- նյութական ռեսուրսներով (համակարգիչներ, սպող և բազմացնող սարքեր և այլն),
- դասախոսի և խորհրդատուների խորհրդատվություններով,
- ուսանողի կողմից ինքնուրույն ստացած տեսական կամ գործնական արդյունքների հրապարակային քննարկման հնարավորությամբ (ներկայացումներ, կոնֆերանսներ, օլիմպիադաներ, մրցույթներ և այլն):

6.3. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն ապահովում են Ինստիտուտի ֆակուլտետների ղեկանատները, ամբիոնները, դասախոսները:

6.4. Ֆակուլտետների ղեկանատները.

- մեթոդական օգնություն են ցուցաբերում ամբիոններին՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու բնագավառում,
- վերահսկում են ամբիոններում ուսանողների ինքնուրույն աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը:
- կարգավորում են ուսանողների ինքնուրույն աշխատանքը ֆակուլտետներում, համաձայնեցնում են առաջադրանքների ծավալները և կատարման ժամկետները, պլանավորվող աշխատանքների, ստուգումների քանակը շաբաթվա ընթացքում, ինքնուրույն աշխատանքների կատարման տեղեկատվական և մեթոդական ապահովումը,
- կազմում են ուսանողների անհատական պարապմունքների դասացուցակները:

6.5. Ամբիոնները.

- մշակում են ուսանողների ինքնուրույն աշխատանքին նվիրված նորմատիվային փաստաթղթերը,
- որոշում են ուսանողների ինքնուրույն աշխատանքի հիմնական ուղղությունները, բովանդակությունը, ձևերը և մեթոդները,
- վերահսկում են դասավանդվող առարկաների ապահովվածությունը դասագրքերով և ուսումնական ձեռնարկներով,
- որոշում են յուրաքանչյուր առարկայից ինքնուրույն ուսուցման ենթակա նյութի կոնկրետ բովանդակությունը և ծավալը՝ համաձայն ուսումնական պլանների,

- մշակում են ուսումնամեթոդական փաթեթներ, ծրագրեր, ձեռնարկներ, նյութեր, դասագրքեր՝ տպագիր և էլեկտրոնային տեսքով՝ համաձայն պետական կրթական չափորոշիչների,
- մշակում են առաջադրանքներ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար,
- ապահովում են ինքնուրույն աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը ամբիոնների բոլոր առարկաների համար,
- վերահսկում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման կազմակերպումը և որակը,
- վերլուծում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների արդյունավետությունը, կատարում փոփոխություններ դրանց կազմակերպման գործընթացում:

#### 6.6. Դասախոսները.

- որոշում են առաջադրանքների ձևերը և թեմաները, ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունքների ներկայացման ժամկետները,
- նախապատրաստում են ուսանողների ինքնուրույն աշխատանքի կատարման համար անհրաժեշտ մեթոդական նյութերը՝ համաձայն կոնկրետ պահանջների,
- անցկացնում են խորհրդատվություններ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքներին վերաբերվող հարցերի շուրջ:

#### 6.7. Ինստիտուտի գրադարանի, ընթերցասրահների աշխատակազմը.

- ապահովում են ինքնուրույն աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ուսումնական, մեթոդական, գիտական, պարբերական, տեղեկատվական և գեղարվեստական գրականությունը, այդ թվում նաև էլեկտրոնային կրիչներով,
- ապահովում են տեղեկատվական նյութերի մատչելիությունը:

#### 6.8. Ինստիտուտի գիտամեթոդական կաբինետների աշխատակիցները.

- կատարում են խորհրդատվություն՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքների տեղեկատվական և մեթոդական ապահովման ուղղությամբ,
- տրամադրում են ուսանողներին կաբինետի տնօրինության տակ գտնվող անհրաժեշտ գիտական, գիտամեթոդական, ուսումնական նյութերը:

### 7. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգման համակարգը



7.1. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգումը և արդյունքների գնահատումը ձևավորվում է հետևյալ բաղադրիչներից.

- ուսանողների ինքնաստուգում և ինքնագնահատում,
- վերահսկողություն, ստուգում և գնահատում դասախոսի կողմից:

7.2. Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ստուգման ձևերն են.

- բանավոր հարցումը,
- ստուգողական աշխատանքը,
- տնային առաջադրանքների ստուգումը,
- օտար լեզուներով տեքստերի թարգմանությունների ստուգումը,
- զեկուցումները,
- ռեֆերատների, կուրսային աշխատանքների, ավարտական որակավորման աշխատանքների պաշտպանությունը,
- ընթացիկ ստուգարքները և քննությունները,
- ամփոփիչ ստուգարքները և քննությունները:

7.3. Ինքնուրույն աշխատանքի ստուգումներն իրականացվում են ըստ Ինստիտուտում գործող «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ»- ի:

## **8. Ուսանողների պարտականությունները և իրավունքները**

8.1. Ուսանողները պարտավոր են.

- ծանոթանալ ուսումնական պլանում ընդգրկված դասընթացների համար նախատեսված ինքնուրույն աշխատանքների տեսակներին և ձևերին,
- ճշտել դասախոսների հետ տվյալ առարկայի ուսումնասիրման համար անհրաժեշտ ինքնուրույն աշխատանքի ծավալները և ներկայացման ժամկետները,
- ուսումնասիրել ամբիոններում մշակված ինքնուրույն աշխատանքների անցկացմանը նվիրված մեթոդական փաթեթները, ձեռնարկները և այլ նյութերը,
- ինքնուրույն աշխատանքներ կատարելիս ուսումնասիրել տվյալ հարցին վերաբերող տպագիր և էլեկտրոնային վերջին նյութերը,

- հաստատված ժամկետներում ներկայացնել դասախոսին կատարված ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

8.2. Ուսանողներն ինքնուրույն աշխատանք կատարելու համար իրավունք ունեն.

- օգտվելու գրադարանային ֆոնդում գտնվող դասագրքերից, մենագրություններից և այլ նյութերից, առարկայական կաբինետներում, ամբիոններում առկա գրականությունից, մեթոդական նյութերից, գործնական և լաբորատոր աշխատանքների ձեռնարկներից և այլ անհրաժեշտ նյութերից,
- օգտվելու Ինստիտուտի գիտական կաբինետից՝ Ինտերնետ կապի միջոցով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով,
- օգտվելու գիտական լաբորատորիաներից և համակարգիչներից՝ ինքնուրույն գիտական հետազոտություններ կատարելու նպատակով,
- դիմելու դասախոսներին՝ խորհրդատվություն ստանալու նպատակով,
- դասախոսների, ամբիոնների վարիչների միջամտությամբ Ինստիտուտի ղեկավարությունից ստանալ ուղղորդող փաստաթղթեր՝ այլ կազմակերպություններում հարցումներ, հետազոտություններ և այլ աշխատանքներ կատարելու թույլտվություն ստանալու նպատակով: